



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 սեպտեմբերի 2019 թվականի
Թիվ 107-Ա, քաղաք Երևան

«ԱԼԿՈ ԻՄՊՈՐՏ ԷՔՍՊՈՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի սեպտեմբերի 6-ի դռնբաց նիստում քննարկեց «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

«Արբրեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ «Արբրեն» ընկերություն) 2019 թվականի հունիսի 26-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում (այսուհետ՝ Դիմում)՝ հայտնելով, որ «Արբրեն» ընկերությունը հանդիսանում է լիտվական «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության պաշտոնական գործընկերը և Լիտվայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետության տարածք է ներկրում վերջինիս արտադրանքը՝ ճանաչված «STUMBRAS» ապրանքային նշանով բարձրակարգ ալկոհոլային խմիչքների (օղու) տեսականին:

«Արբրեն» ընկերությունը հայտնել է նաև, որ վերջին շրջանում սպառողներից ստացված տեղեկատվությունից պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքների իրացման կետերում վաճառվում է «STUMBRAS» ապրանքային նշանով արտադրանք՝ «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության արտադրանքն ամբողջությամբ կրկնօրինակված՝ նույն «STUMBRAS» անվանումով օղի: «STUMBRAS» օղու կրկնօրինակումն իրականացվում է հայկական Ընկերության կողմից:

«Արբրեն» ընկերությունը նշել է, որ Ընկերության կողմից արտադրվող «STUMBRAS» ապրանքային նշանով արտադրանքի իրացումն առաջացնում է շփոթություն՝ մոլորեցնելով սպառողներին: Ընկերության կողմից օգտագործվող «STUMBRAS» անվանումը նույնական է լիտվական «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության կողմից միջազգային ընթացակարգով գրանցված «STUMBRAS» ապրանքային նշանի հետ: «Արբրեն» ընկերությունը նշել է նաև, որ Ընկերության նման գործողությունը հանդիսանում է հակաիրավական և ենթակա է որակման «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Հաշվի առնելով Ընկերության կողմից «STUMBRAS» անվանումով ապրանքային նշանի ապօրինի օգտագործման փաստը՝ «Արբրեն» ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին Ընկերության հանդեպ կիրառել օրենքով սահմանված համապատասխան պատժամիջոցներ՝ կանխելով վերջինիս հակաիրավական գործողությունները:

Ի լրումն Դիմումի՝ «Արբրեն» ընկերությունը 2019 թվականի հունիսի 27-ին Հանձնաժողով է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ տրամադրում է լիտվական «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության արտադրած «STUMBRAS» ապրանքային նշանով օղու նմուշը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ «Արբրեն» ընկերության՝ 2019 թվականի հունիսի 26-ի դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ (այսուհետ՝ Վարչական վարույթ):

Վարչական վարույթի շրջանակներում բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով, հաշվի առնելով «Արբրեն» ընկերության ներկայացրած տեղեկատվությունն առ այն, որ ««STUMBRAS» ապրանքային նշանով արտադրանքը վաճառվում է ՀՀ մի շարք քաղաքների իրացման կետերում՝ Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի հունիսի 27-ի «Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ» թիվ 68-Ա հրամանի (այսուհետ՝ թիվ 68-Ա հրաման) հիման վրա 2019 թվականի հունիսի 28-ին անհատ ձեռնարկատեր Գայանե Գևորգի Ստեփանյանի (այսուհետ՝ ԱՁ Գ. Ստեփանյան) (Գեղարքունիքի մարզ, գ. Դոմաշեն, 11փող., 13) մոտ՝ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Նաիրյան 143, 13-14 հասցեում իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» թիվ 68 արձանագրությունը: Նշված հսկիչ գնման արդյունքում գնվել է 1 շիշ, 0.5 լիտր տարողությամբ «STUMBRAS VODKA» ապրանքային նշանով օղի՝ 900 դրամ արժեքով, որի ինքնակաշուն պիտակի մակնշվածքում նշված է՝ «Արտադրող «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ, հասցե՝ ք. Երևան, Մալաթիա 68: Լիցենզիա՝ Ա-XX-000028:»:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի հունիսի 28-ի «Հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ» թիվ 70-Ա հրամանի (այսուհետ՝ թիվ 70-Ա հրաման) հիման վրա 2019 թվականի հուլիսի 1-ին անհատ ձեռնարկատեր Սրբուհի Այվազյանի (այսուհետ՝ ԱՁ Ս. Այվազյան) (Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Կիրովի 45Ա/43) մոտ՝ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Վազգեն Առաջին 5 հասցեում, իրականացվել է հսկիչ գնում, որի արդյունքում կազմվել է «Հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ» թիվ 70 արձանագրությունը: Նշված հսկիչ գնման արդյունքում գնվել է 1 շիշ, 0.5 լիտր տարողությամբ «STUMBRAS VODKA» անվանումով օղի՝ 900 դրամ արժեքով, որի ինքնակաշուն պիտակի մակնշվածքում նշված է՝ «Արտադրող «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ՍՊԸ, հասցե՝ ք. Երևան, Մալաթիա 68: Լիցենզիա՝ Ա-XX-000028:»:

Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի հուլիսի 3-ի թիվ ԳԳ-1364 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1364 գրություն) ԱՁ Գ. Ստեփանյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել թիվ 68-Ա հրամանի հիման վրա իրականացված հսկիչ գնմամբ ձեռքբերված «STUMBRAS» ապրանքային նշանով օղու՝ ԱՁ Գ.Ստեփանյանին իրականացված մատակարարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան թիվ ԳԳ-1364 գրության՝ ԱՁ Գ.Ստեփանյանը 2019 թվականի հուլիսի 12-ին Հանձնաժողովին հայտնել է, որ թիվ 68-Ա հրամանի հիման վրա իրականացված հսկիչ գնմամբ ձեռքբերված «STUMBRAS» ապրանքային նշանով օղին ձեռք է բերել սպիտակ գույնի «Գազել» մակնիշի մեքենայից, և տվյալ ապրանքի մատակարարումը հիմնավորող փաստաթուղթ առկա չէ:

Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի հուլիսի 3-ի թիվ ԳԳ-1365 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1365 գրություն), ԱՁ Ս. Այվազյանից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել թիվ 70-Ա հրամանի հիման վրա իրականացված հսկիչ գնմամբ ձեռքբերված «STUMBRAS» ապրանքային նշանով օղու՝ ԱՁ Ս. Այվազյանին իրականացված մատակարարումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Ի պատասխան թիվ ԳԳ-1365 գրության, ԱՁ Ս. Այվազյանը 2019 թվականի հուլիսի 15-ին Հանձնաժողով է ներկայացրել ապրանքների մատակարարման հարկային հաշիվները (թիվ Ա6370937412 և թիվ Ա0189400196)՝ հայտնելով, որ Ընկերության կողմից մայիս ամսվա համար տրամադրվել են նշված ապրանքի հաշիվ-ապրանքագրեր, սակայն անուշադրության պատճառով ԱՁ Ս. Այվազյանը չի նկատել, որ նշված հաշիվ-ապրանքագրերում բացակայում է օղու՝ «STUMBRAS» անվանումը: ԱՁ Ս.Այվազյանի հարցմանն ի պատասխան Ընկերությունը հայտնել է, որ հաջորդ անգամ հաշիվ-ապրանքագրում կնշվի «STUMBRAS» անվանումը:

Բացի այդ, Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի հուլիսի 1-ի թիվ ԳԳ-1351 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1351 գրություն) Ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել «STUMBRAS» ապրանքային նշանի օգտագործման թույլտվությունը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

Ի պատասխան թիվ ԳԳ-1351 գրության, Ընկերությունը հայտնել է, որ «STUMBRAS» ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն չունի, հետևաբար չի կարող Հանձնաժողով ներկայացնել նման թույլտվությունը հիմնավորող որևէ փաստաթուղթ: Միաժամանակ, Ընկերությունը նշել է, որ առհասարակ տեղեկատվություն չի ունեցել ոչ միայն «Արբերեն» ընկերության կողմից, այլ նաև որևէ այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից նման տեսակի խմիչք Հայաստանի Հանրապետություն ներկրելու և «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության պաշտոնական գործընկերը հանդիսանալու վերաբերյալ: Ընկերությունը նշել է նաև, որ վերջինս արտադրել է նշված ապրանքային նշանը կրող խմիչքը շատ քիչ խմբաքանակով՝ մի քանի տասնյակ շիշ, որն էլ իր հերթին Հանձնաժողովի գրությունը ստանալուց անմիջապես հետո հետ է կանչվել շուկայից, և դադարեցվել է նշված խմիչքի արտադրությունը:

Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի հուլիսի 26-ի թիվ ԳԳ-1569 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1569 գրություն) Ընկերությանից պահանջել է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Ընկերության կողմից «STUMBRAS» ապրանքային նշանով օղու շրջանառության ոլորտում իրականացված գործունեության վերաբերյալ,

2. այն տնտեսվարող սուբյեկտների անվանումները, որոնց 2018 թվականին և 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության կողմից մատակարարվել է «STUMBRAS» ապրանքային նշանով օղին, ինչպես նաև դրանց հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

3. նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված ապրանքների շշերի, խցանների և պիտակների քանակի, դրանց արտադրության վայրի և ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

4. նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից արտադրված օղու՝ ըստ ապրանքային նշանների բոլոր տեսակների, ինչպես նաև տարաների քանակներն ըստ տարողության,

5. նույն ժամանակահատվածում Ընկերության ընդհանուր հասույթի վերաբերյալ՝ ներկայացնելով դրա բացվածքը ըստ «Ալկո Իմպորտ Էքսպորտ» ընկերության կողմից արտադրված օղու ապրանքատեսակների՝ ներառյալ «STUMBRAS» ապրանքային նշանով օղու,

6. Ընկերության կողմից արտադրված օղու ապրանքատեսակների (ներառյալ «STUMBRAS» ապրանքային նշանով օղու) մինչև իրացումը պահեստավորման վայրերի հասցեները,

7. Ընկերության հետ Օրենքի 4.1-րդ հոդվածի իմաստով անձանց խումբ հանդիսացող իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց վերաբերյալ:

Ի պատասխան թիվ ԳԳ-1569 գրության՝ Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ պահանջվող տեղեկատվությունը խնդրարկվող ժամանակահատվածում տրամադրել չի կարող, քանի որ տեղեկատվությունն ամբողջությամբ տրամադրելու համար պահանջվում է Ընկերության մի քանի աշխատակիցների (հաշվապահ, պահեստապետ և այլոք) համատեղ աշխատանքը, որոնցից ոմանք գտնվում են ամենամյա արձակուրդում: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Հանձնաժողովին հնարավորինս ամբողջական տեղեկատվության և այն հիմնավորող փաստաթղթերի (հաշվի առնելով նաև տեղեկատվության ծավալուն լինելը) տրամադրման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ընկերությունը խնդրել է Հանձնաժողովին տեղեկատվությունը պահանջվող ժամանակահատվածում տրամադրելու անհնարինության պատճառները համարել հարգելի և Ընկերությանը տրամադրել ևս 10 (տաս) աշխատանքային օր՝ պահանջվող տեղեկատվությունը և հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահի՝ 2019 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԳԳ-1716 գրությամբ Հանձնաժողովը Ընկերությանը հնարավորություն է տվել թիվ ԳԳ-1569 գրությամբ պահանջվող տեղեկատվությունը ներկայացնել մինչև 2019 թվականի օգոստոսի 22-ը ներառյալ:

Ի պատասխան թիվ ԳԳ-1569 գրության՝ Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ Ընկերությունը «STUMBRAS» ապրանքային նշանով օղի արտադրել է շատ քիչ խմբաքանակով՝ ութից-ինը տասնյակ շիշ, ինչն էլ Հանձնաժողովի գրությունը ստանալուց անմիջապես հետո դադարեցվել է: Ընկերությունը նշել է, որ «STUMBRAS» ապրանքային նշանով օղին վաճառվել է մանրածախ եղանակով, և այլ տնտեսվարող սուբյեկտները ենթադրաբար ապրանքը գնել են

այդ եղանակով և իրացրել: Ընկերությունը նշել է նաև, որ «STUMBRAS» ապրանքային նշանով օղի Ընկերության կողմից այլևս չի արտադրվում, ուստի Ընկերությունում առկա չեն «STUMBRAS» ապրանքային նշանով օղու խցաններ, պիտակներ և շշեր, իսկ մինչև «STUMBRAS» ապրանքային նշանով օղու իրացումն Ընկերության կողմից ապրանքի պահեստավորման վայր է հանդիսացել՝

: Ընկերությունը հայտնել է նաև, որ վերջինիս ընդհանուր հասույթը արտադրված օղու գծով 2018 թվականին կազմել

ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի

առաջին կիսամյակի համար՝

ՀՀ դրամ: Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ վերջինիս հետ Օրենքի 4.1-րդ հոդվածի իմաստով անձանց խումբ հանդիսացող իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձիք

:
Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի 2019 թվականի հունիսի 27-ի թիվ ԳԳ-1342 գրությամբ (այսուհետ՝ թիվ ԳԳ-1342 գրություն) դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով Հանձնաժողովին տրամադրել 2018 թվականի տարեկան և 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում Ընկերության հասույթի, ինչպես նաև ռեզիդենտների շահութահարկի հաշվարկի (ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 749-Ն հրամանի հավելված N1) հիման վրա Ընկերության 2018 թվականի ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքի վերաբերյալ տեղեկատվություն, որին ի պատասխան ՀՀ պետական եկամուտների կոմիտեն՝ 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 3015 գրությամբ հայտնել է, որ Ընկերության հասույթը 2018 թվականին կազմել է

ՀՀ դրամ, իսկ 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝

դրամ: Ընկերության 2018 թվականի ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է՝ «Ընդամենը ակտիվներ»՝ դրամ (մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ) և «Ընդամենը պարտավորություններ»՝ դրամ (մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնակարի՝ 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ ԱՎ-1697 գրությամբ Հանձնաժողովը խնդրել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությանը (այսուհետ՝ Գործակալություն) տրամադրել Ընկերության անվամբ ազգային և միջազգային ընթակարգերով գրանցված և ՀՀ-ում իրավական պահպանության ենթակա բոլոր ապրանքային նշանների գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները (հնարավորության դեպքում՝ նաև հայերենով տարբերակները), որին ի պատասխան Գործակալությունը հայտնել է, որ Ընկերության անունով ապրանքային նշաններ գրանցված չեն:

Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի պաշտոնակարի՝ 2019 թվականի օգոստոսի 12-ի թիվ ԱՎ-1696 գրությամբ Հանձնաժողովը խնդրել է Գործակալությանը տրամադրել ազգային և միջազգային ընթակարգերով գրանցված և ՀՀ-ում պահպանվող «STUMBRAS» ապրանքային նշանի վերաբերյալ տեղեկատվություն՝ կցելով գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները (հնարավորության դեպքում՝ նաև հայերենով տարբերակները), որին ի պատասխան Գործակալությունը հայտնել է, որ միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն են ստացել «STUMBRAS» բառը պարունակող միջազգային գրանցման թիվ 1463169 (իրավական պահպանության թվական՝ 31.01.2019), թիվ 1483570 (իրավական պահպանության թվական՝ 10.07.2019), թիվ 1483627 (իրավական պահպանության թվական՝ 09.07.2019) հերթական համարներ ունեցող ապրանքային նշանները «UAB MV GROUP ASSET MANAGMENT» լիտվական ընկերության անվամբ, կցվել են նաև Ապրանքային նշանների պետական գրանցամատյանից քաղվածքները, իսկ հայերեն տարբերակով քաղվածքների տրամադրումը հնարավոր չէ, քանի որ ապրանքային նշանների գրանցման միջազգային հիմնապաշարի պաշտոնական լեզուները անգլերենն ու ֆրանսերենն են:

2019 թվականի օգոստոսի 23-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի դռնբաց նիստ, որի ընթացքում քննարկվել է «Արբերեն» ընկերության՝ 2019 թվականի հունիսի 26-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում առկա փաստական հանգամանքների վերաբերյալ

հարցը: Նշված նիստին «Արբրեն» ընկերության որևէ ներկայացուցիչը չի մասնակցել՝ չնայած այն հանգամանքին, որ պատշաճ ծանուցված է եղել Հանձնաժողովի նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին: Հանձնաժողովի նիստին մասնակցել է Ընկերության ներկայացուցիչը՝ հայտնելով, որ փաստական հանգամանքների հետ կապված որևէ առարկություն չունի: Բացի այդ, Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը տվյալ ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն չի ունեցել, Ընկերության կողմից խախտումը ընդունվել է՝ նշելով, որ տեղեկություն չի ունեցել «Արբրեն» ընկերության՝ նշված ապրանքի պաշտոնական ներկայացուցիչը լինելու մասին: Ընկերության ներկայացուցիչը նշել է նաև, նշված ապրանքային նշանով օդին արտադրվել է քիչ խմբաքանակով և հաշվի առնելով, որ Ընկերության կողմից թույլ տրված խախտումն առաջին անգամ է, ուստի խնդրել է Հանձնաժողովին մեղմ մոտեցում ցուցաբերել Ընկերության նկատմամբ:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որն առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-ին կետի համաձայն՝ գրանցված ապրանքային կամ սպասարկման նշանին կամ արդյունաբերական նմուշին նույնական ապրանքային կամ սպասարկման նշանի կամ արդյունաբերական նմուշի օգտագործումն առանց իրավատիրոջ համաձայնության:

Նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ ապրանքի արտաքին տեսքի, օրինակ՝ ապրանքի փաթեթավորման, գույնի կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությունները կամ վարքագիծը:

Գործակալության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության և համապատասխան փաստաթղթերի համաձայն՝ «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության անվամբ 2019 թվականի հունվարի 31-ին ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱՄՄԴ) 33-րդ դասի ապրանքների համար միջազգային ընթացակարգով գրանցվել է «STUMBRAS VODKA» ապրանքային նշանը (գրանցման համար՝ թիվ 1463169), որը իրավական պահպանություն է ստացել Հայաստանի Հանրապետությունում:

Վարչական վարույթի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների, մասնավորապես Գործակալության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության անվամբ ապրանքային նշան (այդ թվում՝ «STUMBRAS VODKA» ապրանքային նշան) գրանցված չէ: Բացի այդ, հարկ է արձանագրել, որ Ընկերությունը «STUMBRAS VODKA» ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն չունի:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության կողմից օգտագործված և չգրանցված «STUMBRAS VODKA» ապրանքային նշանը նույնական է «ՄՎ Գրուպ Պրոդակշն» ընկերության անունով գրանցված և Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության ենթակա «STUMBRAS VODKA» ապրանքային նշանին, թե գրաֆիկական (տեսողական), և թե ձայնային (հնչյունային) առումներով, ապրանքային նշանի առանձին տարրերի՝ միմյանց նկատմամբ հարաբերակցությամբ կրկնում է այն:

Հարկ է նշել, որ նույնական են նաև «Արբրեն» ընկերության կողմից ներմուծված ապրանքի և Ընկերության կողմից արտադրված ապրանքի արտաքին տեսքը, մասնավորապես՝ շի արտաքին տեսքը, շի չափը, գունային համակցությունը, ինչպես նաև շի վրա առկա

գրառումները, ինչի արդյունքում մեծանում է նշված ապրանքների միջև շփոթության առաջացման հավանականությունը:

Այսպիսով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողություններուն ու վարքագիծը համարվում են անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ շփոթության առաջացում, մասնավորապես Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն ստացած «STUMBRAS VODKA» ապրանքային նշանին նույնական «STUMBRAS VODKA» նշանի օգտագործումն Ընկերության կողմից առանց իրավատիրոջ համաձայնության համարվում է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի խախտում, իսկ «Արբրեն» ընկերության կողմից ներմուծված օղու շշի արտաքին տեսքի կրկնությունը համարվում է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի խախտում:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) տնտեսվարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոս: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև հինգ տոկոս:

Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը, ի թիվս այլնի, հաշվի է առնում հետևյալ հանգամանքերը.

- Ընկերության կողմից թույլ է տրվել անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ այլ տնտեսվարող սուբյեկտի առաջարկած ապրանքների նկատմամբ շփոթության առաջացում, որը դրսևորվել է ինչպես գրանցված ապրանքային նշանին նույնական ապրանքային նշանի օգտագործմամբ առանց իրավատիրոջ թույլտվության, այնպես էլ այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից ներմուծվող ապրանքի արտաքին տեսքի նկատմամբ շփոթություն առաջացնող գործողությամբ.

- սույն որոշմամբ նկարագրված իրավախախտումները կատարելու Ընկերության դիտավորությունը, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ թե Ընկերության կողմից արտադրված ապրանքի արտաքին տեսքը, թե դրա վրա օգտագործված «STUMBRAS VODKA» ապրանքային նշանն ամբողջապես կրկնում են «Արբրեն» ընկերության կողմից ներմուծված ապրանքի տեսքը և «STUMBRAS VODKA» ապրանքային նշանը, որի՝ Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության ենթակա լինելու փաստը հանրամատչելի է, այդ մասին տեղեկատվությունն առկա է Գործակալության պաշտոնական կայքում (aipr.am).

- Ընկերության կողմից Օրենքի խախտումների կրկնակիության հանգամանքը: Մասնավորապես Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 25-ի «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 64-Ա որոշմամբ Ընկերության գործողությունները և վարքագիծը՝ այն է Ընկերության կողմից «ПАРЛАМЕНТ PARLAMENT» և «МЯГКОВ MYAGKOV» ապրանքային նշաններին շփոթության աստիճանի նման «ПАРЛАМЕНТ PARLAMENT» և «МЯГКОВ» ապրանքային նշանների օգտագործումը որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ շփոթության առաջացում այլ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ, և Ընկերության նկատմամբ կիրառվել է

պատասխանատվության միջոց՝ նախազգուշացում, հանձնարարելով՝ հետագայում բացառել Օրենքի խախտումը.

- իրավախախտումը բացասական ազդեցություն է ունեցել համապատասխան ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վրա, որի արդյունքում Ընկերությունը ստացել է մրցակցային առավելություններ.

- Ընկերությունն ընդունել է իրավախախտում կատարելու փաստը և հայտնել, որ Հանձնաժողովի գրությունը ստանալուց անմիջապես հետո դադարեցրել է այն:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել տուգանք՝ բոլոր օղիների գծով Ընկերության նախորդ տարվա հասույթի՝ դրամի տոկոսի չափով, որը կազմում է 16 207 000 դրամ՝ Ընկերության ընդհանուր հասույթի՝ դրամի մոտ

տոկոսի չափով: Հաշվի առնելով, որ նշանակվող տուգանքը կազմում է Ընկերության ընդհանուր հասույթի մոտ տոկոսը, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության ակտիվների և պարտավորությունների մասին տրամադրված տեղեկատվությունը, հարկ է ամրագրել, որ նշանակվող տուգանքը չի կարող բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրությամբ սահմանված հիմնարար նշանակություն ունեցող հանրային շահերի պաշտպանության նպատակով պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված օրենքով կարող են ստեղծվել ինքնավար մարմիններ, իսկ 11-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն ինքնավար մարմին է, որը նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրականացնում է տնտեսական մրցակցության պաշտպանությունը:

Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Վերը նշված իրավանորմերի համադրության և վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված Հանձնաժողովի որոշումների կատարումը բխում է հանրային շահի ապահովման անհրաժեշտությունից: Ավելին, սույն գործի հանգամանքների համատեքստում հանրային շահի առկայությունը դիտարկվում է նաև այն առումով, որ տվյալ դեպքում անբարեխիղճ մրցակցությունը գործողությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սպառողների շահերի վրա: Հետևաբար, Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն որոշման անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահերից:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 1-ին, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 12-րդ հոդվածի 1-ին, մասը, 2-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» կետերը, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածը, 36-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է

1. «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ սույն որոշմամբ նկարագրված գործողություններն ու վարքագիծը որակել որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ

առաջարկած ապրանքների վերաբերյալ շփոթություն առաջացնելու գործողություն (այսուհետ՝ Օրենքի խախտում):

2. Օրենքի խախտման համար «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ 16 207 000 դրամի չափով:

3. Հանձնարարել «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) 10-օրյա ժամկետում շտկել Օրենքի խախտումը՝ իրականացնելու դեպքում դադարեցնել սույն որոշմամբ նշված ապրանքի արտադրությունն ու իրացումը, իսկ առևտրային շրջանառության մեջ դրա առկայության դեպքում հետ կանչել բոլոր առևտրային օբյեկտներից.

2) 10-օրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել սույն որոշման 2-րդ կետով սահմանված տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթ.

3) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հանձնարարականը կատարելուց հետո 3-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ, ինչպես նաև նույն ժամկետում ներկայացնել տեղեկատվություն՝ սույն որոշմամբ նշված ապրանքը բոլոր առևտրային օբյեկտներից հետ կանչելուց հետո դրա ծավալների (մնացորդի) վերաբերյալ՝ ներկայացնելով հիմնավորող ապացույցներ.

4) հետազայում բացառել Օրենքի խախտումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը համապատասխանաբար «Արբերեն» և «Ալկո Իմպորտ Էքսպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա բողոքարկումը (կատարումը):

ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ